ՇՊԱԿ-ների ուղեցույց

Մարզ/քաղաք	Հասցե	Թեժ Գիծ	Գործընկեր
Արագածոտն /Աշտարակ	Աշտարակ, Վ. Պետրոսյան 51/2 *Ապարան՝ Բաղրամյան 13 *Թալին՝ Սպանդարյան 2	080 00 11 22	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Արարատ /Արարատ	Չարենց 2/4	080 00 11 17	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Արմավիր /Արմավիր	Շահումյան 68ա	080 00 11 18	Արմավիրի զարգացման կենտրոն
Գեղարքունիք /Գավառ	Սայադյան 2/1	080 00 11 16	Գեղարքունիքի առևտրաարդյունաբերության պալատ
Կոտայք /Հրազդան	Կենտրոն Ա-2 թաղամաս	080 00 11 19	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Լոռի / Վանաձոր	Տիգրան Մեծ 59	080 00 11 12	ԹԻ- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Շիրակ /Գյումրի	Պուշկին 96	080 00 11 21	ԹԻ-«Ասպարեզ» Ժուռնալիստների ակումբ
Սյունիք / Կապան	Կապան, Շահումյան 4 *Սիսիան՝ Չարենց 5 *Գորիս՝ Խորենացի 41 *Մեղրի՝Զորավար Անդրանիկ 36/1	080 00 11 14	Սյունիքի Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն
Տավուշ / Իջևան	Անկախության 4/14	080 00 11 13	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Վայոց Ձոր /Եղեգնաձոր	Նարեկացի18ա	080 00 11 20	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Երևան	Այգեստան 9, տուն 6	080 00 11 10	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ (ԹԻ)

*ընդունելության կենտրոններ, որտեղից քաղաքացիների դիմումները հղվում են տվյալ մարզի ՇՊԱԿ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

ՀԳՄԾ
Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

Սույն լրատվաթերթիկի բովանդակությունը կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

ՇՊԱԿ Շահերի Պաշտպանության և աջակցության կենտրոն

ՇՊԱԿ տեղեկատու - Թողարկում 4 - 2010 Փետրվար

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵՋ՝

- Դատարանի վճիռը իրագործվեց և պարտքը վերադարձվեց (Կոտայք)
- Վերջնահաշվարկը կատարվեց երկու տարի անց (Արագածոտն)
- Հարցազրույց Արմավիրի ՇՊԱԿ-ի համակարգող Նաիրա Առաքելյանի հետ
- Տաքսու վարորդը պաշտպանեց իր ոտնահարված իրավունքը (Գեղարքունիք)
- Ապօրինի բռնագրավումը կանխվեց (Երևան)
- ՇՊԱԿ-ի ուղեցույց

Դատարանի վճիռը իրագործվեց և պարտքը վերադարձվեց

Գոհարը գոհ էր. երկար իրավական քաշքշուկներից հետո նա հաղթեց դատական գործն ընդդեմ Կոտայքի մի բնակչի, ով նրանից պարտքով վերցրել էր $3,000 ԱՄՆ դոլար և հետ չէր վերադարձրել: Դատական ակտերի հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայության միջոցով պարտքի 50%-ը մարվեց: Այդուհանդերձ, պարտքի մնացած մասի մարումըավելի խնդրահարույց ստացվեց, քան ակնկալվում էր:

Գոհարին խնդրեցին այցելել ԴԱՀԿ ծառայություն՝ ստորագրելու մի փաստաթուղթ, որի համաձայն, Գոհարը կորցնում էր պարտքի դեռևս չմարված մասը հետ ստանալու հնարավորությունը: ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողի պնդմամբ Գոհարը ստորագրեց փաստաթուղթը՝ հնարավորություն չունենալով այն նախապես մանրամասն ուսումնասիրելու: Դրա մասին հարևանների և ընկերների հետ խորհրդակցելուց հետո միայն նա հասկացավ, որ իրեն խաբել են:

Գոհարի բարկությանը չկար սահման: Նա վստահել էր պետական պաշտոնյայի, ով հավանաբար անպարտաճանաչ պարտապանից կաշառք էր վերցրելգործը փակելու համար: Գոհարն օգնության համար դիմեց տեղի հեռուստակայանին, իսկ վերջինս էլ նրան ուղղորդեց դիմելու Կոտայքի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնին (ՇՊԱԿ): Կոտայքի ՇՊԱԿ-ը Հայաստանում գործող տասնմեկ հակակոռուպցիոն կենտրոններից մեկն է: Կենտրոնները գործարկվում են տեղական ՀԿ-ների կողմից և տրամադրում են անվճար իրավաբանական աջակցություն կոռուպցիայից տուժածներին: Վերջիններս կարող են դիմել ՇՊԱԿ-ներին հեռախոսով կամ այցելելությունների միջոցով:

Գոհարի գործը մանրամասն վերլուծելուց հետո ՇՊԱԿ-ի իրավաբանն այցելեց ԴԱՀԿ ծառայության գրասենյակ՝ բացատրելու դատական վճռի չկատարման լրջությունը: Իրավաբանը պահանջեց, որ Գոհարի ստորագրած փաստաթուղթը անվավեր ճանաչվի: Հասկանալով իրավական հնարավոր հետևանքների վտանգը և այն, որ Գոհարն իր իրավունքների պաշտպանության հարցում միայնակ չէ՝ հարկադիր կատարողը ընդունեց փաստաբանի բոլոր պահանջները և վերսկսեց Գոհարի պարտքի մարման գործընթացը՝ պարտապանի ամսական աշխատավարձի հիման վրա:

- Ես շատ շնորհակալ եմ ՇՊԱԿ-ի աշխատակիցներին, - ասաց Գոհարը, - առանց նրանց աջակցության ես կկորցնեի բավականին մեծ գումար:

* Գաղտնիության պահպանման համար բողոքողի անունը և նշված հղումները կազմակերպություններին փոխված են:

Վերջնահաշվարկը կատարվեց երկու տարի անց

2007թ.-ի նոյեմբերին Վարազդատն ազատվեց Արագածոտնի մարզի գյուղապետարաններից մեկում զբաղեցրած իր պաշտոնից: Սակայն գյուղապետը չկատարեցլրիվ վերջնահաշվարկ կատարելու իր պարտավորությունը: Վարազդատը վստահ էր, որ վերջնահաշվարկի չկատարումը կապված էր գյուղապետի և իր միջև եղած անձնական հարցերի հետ: Ավելին, գյուղապետը հրաժարվեց լրացնել և հանձնել քաղաքացուն վերջինիս աշխատանքային գրքույկը: Հայաստանում աշխատանքային գրքույկը համարվում է աշխատողի աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ ներառող հիմնական փաստաթուղթ: Աշխատանքային գրքույկի բացակայությունը խնդիրներ է առաջացնում քաղաքացու համար՝ աշխատանք փնտրելիս կամ թոշակի նշանակման հարցում:

Վարազդատի ընկերներից մեկը խորհուրդ տվեց նրան դիմել Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնին(ՇՊԱԿ)՝ օգնություն ստանալու համար: Հաշվի առնելով պաշտոնական դիրքի ենթադրյալ չարաշահումը՝ Արագածոտնի ՇՊԱԿ-ը միանգամից ստանձնեց Վարազդատի գործը:
ՇՊԱԿ-ի իրավաբանները գրություն ուղարկեցին գյուղապետին՝ կցելով Վարազդատի աշխատանքային պայմանագիրը, և պահանջեցին կատարել նրա վերջնահաշվարկը և բոլոր հասանելիք վճարները: Գրության հետքերով, հեռախոսային հաղորդակցության միջոցով, ՇՊԱԿ-ի աշխատակիցները աշխատեցին գյուղապետարանի հետ և կարողացան վերականգնել Վարազդատի իրավունքները՝ գյուղապետարանը կատարեց Վարազդատի վերջնահաշվարկը և ուղարկեց ՇՊԱԿ-ին բոլոր փաստաթղթերի պատճենները, համաձայն որոնց Վարազդատին էր տրամադրվելու նաև հասանելիք արձակման նպաստը:

Տրամադրված գումարը օգնեց Վարազդատին՝ հոգալու իր ընտանիքի ծախսերը նախքան նոր աշխատանքի անցնելը:
- Ես իրոք շատ շնորհակալ եմ ՇՊԱԿ-ին: Մեզ իսկապես պետք են նման կենտրոններ առկա խնդիրները լուծելու համար, – ասում է Վարազդատը:

* Գաղտնիության պահպանման համար բողոքողի անունը և նշված հղումները կազմակերպություններին փոխված են:

ՇՊԱԿ-ները օգնում են քաղաքացիներին վերականգնել իրենց ոտնահարված իրավունքները

Հարցազրույց

Նաիրա Առաքելյանի հետ

Նաիրա Առաքելյանը Արմավիրի մարզի առաջատար ակտիվիստ է և Արմավիրի զարգացման կենտրոնի նախագահն է, որը մեծ փորձ ունի սոցիալական ոլորտում շահերի պաշտպանության հարցերում: Նաիրան հանդիսանում է Արմավիրի ՇՊԱԿ-ի համակարգողը հիմնադրումից ի վեր (2009թ.): Այս հարցազրույցում նա քննարկում է Արմավիրի ՇՊԱԿ-ի կարճաժամկետ նպատակները, համակարգային բարեփոխումների հետ կապված խնդիրները և կենտրոնի նշանակությունը Արմավիրի առօրյա կյանքում:

Ինչպե՞ս են տեղի բնակիչները տեղեկանում Արմավիրի ՇՊԱԿ-ի մասին և որքանո՞վ են օգտվում կենտրոնի տրամադրած ծառայություններից:

Մարզի բնակիչները տարբեր ուղիներով են տեղեկանում ՇՊԱԿ-ի գործունեության մասին: Մեծամասնությունը տեղեկանում է ծրագրով նախատեսված համայնքային հանդիպումների ժամանակ, երբ խորհրդատվության փոխանցումից բացի բնակիչները ստանում են նաև տեղեկատվական բուկլետներ: Դրանք փոխանցվում են նաև համայնքների մյուս բնակիչներին: Բացի այդ, ՇՊԱԿ-ը կազմակերպել էլ լոր սեղաններ և հրատարակել հոդվածներ իր գործունեության վերաբերյա : Կենտրոն հաճախող քաղաքացիները ևս նպաստում են ՇՊԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Ավելին, մեր կողմից կոռուպցիոն գործերի լուծման հարցում արձանագրված հաջողությունները մեծացնում են վստահությունը հանրային ընկալման մեջ:

Ի՞նչ միջոցներով են ավելի հաճախ լուծվում կոռուպցիոն բողոքները՝ դատակա՞ն, թե՞ վարչական:

Կոռուպցիոն բողոքները հիմնականում լուծվում են վարչական միջոցներով, իհարկե ունենում ենք նաև դատական կարգով լուծվող կոռուպցիոն բողոքներ:

Ինչպե՞ս արձագանքեցին Արմավիրի պետական/իրավապահ մարմինները ՇՊԱԿ-ի բացմանը:

Արձագանքը դրական էր: Ներկայումս համագործակցում ենք նրանց հետ, որը գնալով ավելի է սերտանում և ի նպաստ դրվում քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը:

Ինչպիսի՞ համագործակցություն գոյություն ունի Արմավիրի ՇՊԱԿ-ի և ՏԻՄ-ի/իրավապահների հետ:

Արդեն նշեցի, որ իրավապահ մարմինների հետ համագործակցում ենք տարբեր կոռուպցիոն բողոքների քննման և լուծման շրջանակներում: Հանդիպումների և հարցերի լուծման հետևողականությունն ավելի է մեծացնում շփումն իրավապահ մարմինների հետ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ նույնպես ձևավորվել է համագործակցային դաշտ: Մեր կողմից հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ ՏԻՄ-երի և համայնքների ղեկավարների հետ՝ նրանց հետ քննարկելով կոռուպցիոն ռիսկերի վերացմանն ուղղված գործողությունները:

Համաձայն մինչ օրս եղած ձեր գործերի քանակի, որո՞նք են ձեր կարծիքով կոռուպցիայի արմատները մարզում և ինչպե՞ս կարելի է դրանք լուծել:

Կոռուպցիայի արմատները բնակչության անտեղյակությունն է (իրավական նիհիլիզմ), ինչպես նաև անկարողունակության զգացումը բնակչության մոտ: Իրավական խորհրդատվության տրամադրումը հանրային իրազեկության բարձրացման հիմնական մեխանիզմներից մեկն է, որն իր հերթին նպաստում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և մեծացնում քաղաքացիների ինքնավստահությունը՝ հակազդելու կոռուպցիային:

Ինչպիսի՞ համակարգային բարեփոխումներ եք նախատեսում իրականացնել կենտրոնի ջանքերով:

Կենտրոնը առաջիկայում նախատեսում է իրականացնել ընթացակարգային բարեփոխումներ սոցիալական ապահովության ոլորտում, քանի որ ստացել ենք բազմաթիվ բողոքներ, որոնք առնչվում են հենց այս ոլորտին: Նախատեսվում է հանդիպումներ անցկացնել մարզում այս ոլորտի ղեկավարների ու ներկայացուցիչների հետ, քննարկումներ անցկացնել նրանց հետ և ներկայացնել փոփոխությունների առաջարկները, ինչպես նաև այդ բնագավառում բարձրացնել իրազեկության մակարդակը:

Ի՞նչ ազդեցություն է ունեցել ՇՊԱԿ-ի աշխատանքը Արմավիրում առայսօր:

Առաջին հերթին, մարզի մեծ թվով բնակիչներ ստացել են իրավական խորհրդատվություն և պաշտպանել սեփական իրավունքները տարբեր ոլորտներում և բնագավառներում: Ի լրումն, ՇՊԱԿ-ի առկայությունը մարզում նպաստել է, որ մարզի մի շարք հաստատություններ և պետական մարմիններ արդեն ավելի ուշադիր լինեն օրենքների և կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ:

Որո՞նք են ՇՊԱԿ-ի ծրագրային աշխատանքները մոտ ապագայում:

Մենք նախատեսում ենք էլ ավելի բարձրացնել բնակչության իրազեկության մակարդակը, ավելի հետևողականորեն վերաբերվել կենտրոն դիմած ցանկացած շահառուի բողոքին: Պատրաստվում ենք նաև պարբերաբար քննարկումներ անցկացնել ՏԻՄ-երի, իրավապահ մարմինների հետ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազմանը: Մեր յուրաքանչյուր ջանք ուղղված է հենց այդ ռիսկերի նվազեցմանը:

Մարդկանց վստահությունը մեծ է ՇՊԱԿ-ի հանդեպ, և մենք մեր աշխատանքով ջանք չենք խնայելու ձեռք բերված վստահությունը պահպանելու համար:

Տաքսու վարորդը պաշտպանեց իր ոտնահարված իրավունքը

Երթևեկության բնագավառի կոռուպցիան տարածված խնդիր է Հայաստանում, սակայն ոչ բոլորն են հակված այն հանդուրժելու: Երբ ճանապարհային ոստիկանը Գեղարքունիքի մարզում կանգնեցրեց տաքսու վարորդ Վաչեին և մեղադրեց լուսացույցի կարմիր լույսի տակ երթևեկելու մեջ, Վաչեն անհերքելիորեն չհամաձայնվեց դրա հետ: Վաչեն վստահ էր, որ ճանապարհային երթևեկության ոչ մի կանոն չէր խախտել և հրաժարվեց կաշառք տալ ոստիկանին: Վերջինս զայրացավ Վաչեի անհամաձայնության հանգամանքից և նշանակեց տուգանք, որը համարժեք էր մոտ 25 ԱՄՆ դոլարին, ինչը Վաչեի օրական վաստակի չափն է:

Վաչեի համար դա դարձավ սկզբունքի, այլ ոչ թե ժամանակի կամ փողի հարց: Վաչեն օգնության նպատակով դիմեց Գեղարքունիքի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ):

ՇՊԱԿ-ի աշխատակազմը ստանձնեց Վաչեի գործը և պահանջեց պարզաբանում տեղի ճանապարհային ոստիկանության բաժնից: Ոստիկանության բաժինը առաջարկեց չեղյալ համարել տուգանքը, սակայն Վաչեն համաձայն չէր մասնակի հանգուցալուծմանը: Վաչեն ուզում էր, որ արձանագրություններից և այլ փաստաթղթերից հանվի իր կողմից չկատարված խախտման վերաբերյալ գրանցումը:

ՇՊԱԿ-ները օգնում են կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիներին

Այս պարագայում ՇՊԱԿ-ի աշխատակազմը գրություն ուղարկեց Հայաստանի ճանապարհային ոստիկանության ղեկավարին՝ մանրամասն ներկայացնելով Վաչեի գործը: Արդյունքում, պաշտոնական փաստաթղթերից հանվեցին բոլոր գրառումները կապված այս միջադեպի հետ, իսկ տուգանքը չեղյալ համարվեց : «Ճանապարհային ոստիկանությունը գիտեր, որ իմ բողոքի հետևում կանգնած է լուրջ կազմակերպություն,- ասաց Վաչեն, - դա միանշանակ օգնեց»:

Համատեղելով իրավապաշտպան գործունեությունը, հանրային իրազեկումը և կրթական միջոցառումները՝ ՇՊԱԿ-ը ձգտում է փոխել հանդուրժողականությունը կոռուպցիայի նկատմամբ և իրավազորել քաղաքացիներին, ինչպես դա եղավ Վաչեի դեպքում:

* Գաղտնիության պահպանման համար բողոքողի անունը և նշված հողամասերը կազմակերպություններին փոխված են:

Ապօրինի բռնագրավումը կանխվեց

Լևոնն* ունի գրքերի վաճառքի կետ Երևանի «Վերնիսաժում»: 2009թ.-ի ապրիլին հարկային ծառայության մի տեսուչ բռնագրավեց Լևոնի և նրա մի քանի գործընկերների ապրանքը՝ որպես հիմք նշելով հարկերից խուսափումը և հարկային հաշվառման բացակայությունը: Այնուհետ հարկային ծառայության աշխատակիցը բոլոր վաճառողներին ուղեկցեց հարկային ծառայության տարածքային մարմին և պահանջեց ստորագրել կեղծված մի հաշվետվություն. այն ավելի ուռճացված էր ներկայացնում վաճառողների միջին ամսական եկամուտը և աշխատած օրերի թիվը: Չնայած տեսուչը հավաստիացնում էր, որ այդ հաշվետվության ստորագրումը կհեշտացնի վաճառողների աշխատանքը հետագայում, վերջիններիս մոտ կեղծիքի կասկածներ առաջացան: Լևոնը զգաց, որ տեսուչը փորձում է իրենց ծուղակը գցել՝ կատարելու հարկային խարդախություն, որպեսզի հետագայում դրա դիմաց կարողանա գումար շորթել վաճառողներից: Նրա կասկածները ավելի հիմնավոր դարձան, երբ վաճառողներին սկսեցին ստիպել ստորագրելու երկրորդ փաստաթուղթը, որով նրանց պարտադրվում էր տուգանքի վճարում՝ մոտ 250-300 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

ՇՊԱԿ-ները տրամադրում են իրավաբանական աջակցություն փոքր և միջին ձեռնարկատերերին:”

Լևոնը և իր երկու գործընկերները դիմեց Երևանի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ)՝ աջակցություն հայցելով իր և յոթ այլ վաճառողների համար: Լևոնի բողոքի հիման վրա ՇՊԱԿ-ի իրավաբանը բողոք ներկայացրեց Պետեկամուտների կոմիտե: Կոմիտեն գործը քննելուց հետո եզրակացրեց, որ տեսուչը սխալ է վարվել հարկային պահանջներ ներկայացնելու հարցում: ՇՊԱԿ-ը հաղթեց այս գործում. առգրավված գրքերը վերադարձվեցին և տուգանքը հանվեց:

Լևոնի և նրա գործընկերների հաջողված գործն այժմ հանդիսանում է լավ օրինակ մյուս վաճառողների համար, ովքեր ևս կարող են առնչվել կոռուպցիոն դրսևորումների հետ իրենց աշխատանքի ընթացքում: Միաժամանակ, չհանդուրժելով նման կոռուպցիոն գործելաոճը՝ Պետեկամուտների կոմիտեն աջակցեց Հայաստանի փոքր ձեռներեցությանը:

* Գաղտնիության պահպանման համար բողոքողի անունը փոխված է: